Հաստատում եմ

Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ-ի

Տնօրեն Մ.Հազրոյան

Արձանագրություն N 3

Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված

<<ՎԲԿ ԷԱՃԱՊՁԲ-25/11>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

<<8>> հունվարի 2025թ

ք Վանաձոր

Մասնակցում էին՝

Ժամը՝ 12:00

Հանձնաժողովի նախագահ՝

Ա.Գոգորյան-դեղ ծառայության ղեկավար, պատասխանատու ստորաբաժանման ղեկավար (հանձնաժողովի նախագահ)

Հանձնաժողովի անդամներ՝

- Ե.Մատինյան -դեղագործ,պատասխանատու ստորաբաժանման անդամ (հանձնաժողովի անդամ)
- Ա.Ափոյան- ինվազիվ սրտաբան (հանձնաժողովի անդամ)

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա.Պողոսյան – գնումների համակարգող (քարտուղար)

Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Հանձնաժողովը ուսումնասիրել է <Փրայմ Մեդիքլ> ՍՊԸ-ի կողմից թիվ 30 չափաբաժնի համար ներկայացրած առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և արձանագրել է անհամապատասխանություն հրավերով նշված տեխնիկական բնութագրի և մասնակցի կողմից առաջարկած տեխնիկական բնութագրի միջև:

Հրավերով նշված է <Կորոնար դեղապատ ստենտ, նյութը կոբալտ-քրոմի համաձուլվածք L605, դեղանյութը՝ Սիրոլիմուս, դոզան ոչ պակաս քան 1,4μg/mm²: Ստենտը և բալոնի բաց մասերը դեղապատ են, առկա է նաև լրացուցիչ դեղածածկույթ ստենտի պրոքսիմալ և դիստալ եզրերին: Ստենտի ճաղերի հաստությունը ոչ ավելքան 73միկրոն, պոլիմերը բիոքայքայվող: Ստենտի չափսերը՝

-Տրամագծերը՝ 2,25մմ, 2,50մմ, 2,75մմ, 3,00մմ, 3,50մմ, 4,00մմ, 4,50մմ և 5,00մմ: Երկարությունը՝ առնվազն 11 չափ 2,50մմ,3,00մմ,3,50մմ, 4,00մմ տրամագիծ ունեցող ստենտների համար,ընդ որում ամենակարճը՝ ոչ ավել քան 8մմ, ամենաերկարը՝ ոչ պակաս քան 48մմ; առնվազն 9 չափ՝ 2,25մմ և 2,75մմ տրամագիծ ունեցող ստենտների համար, ընդ որում ամենակարճը՝ ոչ ավել քան 8մմ, ամենաերկարը՝ ոչ պակաս քան 40մմ;

և առնվազն 2 չափ՝ 4,50մմ և 5,00մմ տրամագիծ ունեցող ստենտների համար, ընդ որում ամենակարճը՝ ոչ ավել քան 16մմ, ամենաերկարը՝ ոչ պակաս քան 20մմ: Ապրանքի մատակարարման փուլում Վաճառողը պետք է տրամադրի արտադրողի կողմից ներկայացվող համապատասխանության հավաստագիր, ավտորիզացիոն(երաշխիքային-լիազոր) նամակ, ծագման սերտիֆիկատ:>

Մասնակիցը ներկայացրել է <Կորոնար դեղապատ ստենտ, նյութը կոբալտ-քրոմի համաձուլվածք L605, դեղանյութը՝ Սիրոլիմուս, դոզան 1,4μg/mm²: Ստենտը և բալոնի բաց մասերը դեղապատ են, առկա է նաև լրացուցիչ դեղածածկույթ ստենտի պրոքսիմալ և դիստալ եզրերին: Ստենտի ճաղերի հաստությունը 60 միկրոն, պոլիմերը՝ բիոքայքայվող: Ստենտի չափսերը՝ -տրամագծերը՝ 2,25մմ, 2,50մմ, 2,75մմ, 3,00մմ, 3,50մմ, 4,00մմ, 4,50մմ և 5,00մմ (**հետդիլատացիոն չափ**): Երկարությունը՝ 11 չափ 2,50մմ, 3,00մմ, 3,50մմ, 4,00մմ տրամագիծ ունեցող ստենտների համար, ընդ որում ամենակարճը՝ 8մմ, ամենաերկարը՝ 48մմ; 11 չափ՝ 2,25մմ և 2,75մմ տրամագիծ ունեցող ստենտների համար, ընդ որում ամենակարճը՝ 8մմ, ամենաերկարը՝ 48 մմ, և 11 չափ՝ 4,50մմ (**փաստացի**) և 5,00մմ (**հետդիլատացիոն**) տրամագիծ ունեցող ստենտների համար, ընդ որում ամենակարճը՝ 8մմ, ամենաերկարը՝ 48 մմ : Ապրանքի մատակարարման փուլում Վաճառողը կտրամադրի արտադրողի կողմից ներկայացվող համապատասխանության հավաստագիր, ավտորիզացիոն (երաշխիքային-լիազոր) նամակ, ծագման սերտիֆիկատ:

Հրավերով նշված չափսերը վերաբերվում են փաստացի չափսերին և հանձնաժողովը պահանջել է շտկում , նշելով, որ ստենտի նոմինալ չափսը պիտի լինի 5,0մմ, պոստդիլատացիոն չափսը մինչև 6,0 մմ և մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում առակա է ստենտի նոմինալ չափսերի անհամապատասխանություն:

Հանձնաժողովը առաջարկում է մեկ օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0:

Հանձնաժողովի՝
Նախագահ՝
---------- Ա. Գոգորյան

Անդամներ
---------- Ե.Մատինյան

---------- **Ա.Ափոյան**

Քարտուղար՝---------- **Ա.Պողոսյան**